ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի եւ Լիբանանի Պատգամավորների Խորհրդի միջեւ համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը եւ Լիբանանի Պատգամավորների խորհուրդը, հետագայում անվանվող «Կողմեր»

ընդունելով Հայաստանի եւ Լիբանանի բարեկամության եւ համագործակցության ավանդական հարաբերությունների հետագա արգացման կարեւոր նշանակությունը,

նշելով երկու երկրների միջեւ խորհրդարանական համագործակցության կարեւորությունը բարեկամական եւ փոխշահավետ կապերի զարգացման համար,

ձգտելով աջակցել երկու պետությունների միջեւ քաղաքական, առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցությանը,

ղեկավարվելով Կողմերի բարիդրացիական, իրավունքների ու շահերի հարգման սկզբունքներով

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում ստեղծել Լիբանանի պատգամավորների խորհրդի հետ կապերի պատգամավորական խումբ. Լիբանանի պատգամավորների խորհրդում ստեղծել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հետ կապերի պատգամավորական խումբ:

Հոդված 2. Խորհրդարանական խմբերի միջեւ պարբերաբար անցկացնել խորհրդատվություններ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնողմիջազգային եւ տարածաշրջանային հիմնահարցերի վերաբերյալ:

Հոդված 3. Խորհրդատվությունների անցկացման ժամկետները, ինչպես նաեւ դրանց մակարդակը եւ քննարկման դրվող հարցերը Կողմերը սահմանում են նախապես:

Հոդված 4. Կազմակերպել համագործակցություն խորհրդարանական մշտական հանձնաժողովների միջեւ, որի համար, ըստ անհրաժեշտության, ստեղծել համատեղ աշխատանքային եւ փորձագիտական խմբեր:

Կատարված է Բեյրութ քաղաքում, 1993թ. դեկտեմբերի -ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը հայերեն եւ արաբերեն, ընդ որում, երկու բնագրերն ունեն միատեսակ ուժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝

Բ.ԱՐԱՐՔՑՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝

Ն.ԲԵՐՐԻ